



## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ԱՌԻԹ

ՆԱԽԱԲԱՆ	2
I. Լրատվամիջոցի հաղորդումը որպես քրեական գործի հարուցման ինքնուրույն առիթ.	5
II. Լրատվամիջոցների հաղորդումները որպես քրեական գործի հարուցման օրինական առիթ դիտարկելու չափանիշները.	9
III. Լրատվամիջոցների հաղորդումներին արձագանքելու գործիքակազմի զարգացման հնարավորությունը.	14



## ՆԱԽԱԲԱՆ

Քրեական վարույթի շարժը սկզբնավորելու համար քրեական գործ հարուցելու առիթների շարքին են դասվում նաև հանցագործությունների մասին լրատվության միջոցների հաղորդումները: Դրանք որպես քրեական գործի հարուցման ինքնուրույն առիթ դիտարկելու օրենսդրի մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ լրատվամիջոցները հասարակական կյանքը համակողմանի լուսաբանող, տեղի ունեցած իրադարձություններին օպերատիվ արձագանքող մասշտաբային միջոցներից մեկն են:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների համաձայն՝ զանգվածային լրատվության միջոցները կատարում են հասարակական վերահսկողություն իրականացնող մարմնի (public watchdog) դեր քրեական օրենքով արգելված արարքների կատարման հատկանիշներ պարունակող հրապարակումներ կատարելիս, ինչը պայմանավորված է լինում հրապարակվող նյութի հանդեպ ձևավորված հասարակական հետաքրքրությամբ<sup>1</sup>:

Լրատվության միջոցների հաղորդումները որպես քրեական գործի հարուցման առիթ հայրենական օրենսդրությունում առաջին անգամ նախատեսված են եղել դեռևս ՀԽՍՀ 1961 թվականի քրեական դատավարության օրենսգրքի մակարդակով: Մասնավորապես, օրենսգրքի 97-րդ հոդվածի 3-րդ կետում ամրագրված է եղել, որ «քրեական գործի հարուցման առիթներն են՝ (...) մամուլում հրապարակված հաղորդումները», որտեղ «մամուլ»-ն առավելապես ընկալվել է տպագրված նյութերի իմաստով՝ հաշվի առնելով ԽՍՀՄ 1960 թվականի քրեական դատավարության օրենսգրքի 108-րդ հոդվածի 4-րդ կետում օգտագործվող՝ «քրեական գործի հարուցման առիթներն են՝ (...) տպագրության հանձնված հոդվածները, նամակները, նշումները» ձևակերպումը, որը նույնիսկ առավել ընդարձակ է եղել ՀԽՍՀ քրեադատավարական կարգավորումից՝ ըստ էության ընդգրկելով ցանկացած բովանդակության տպագրված

<sup>1</sup> mutatis mutandis Axen Springer v. Germany գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը, զանգատ թիվ 39954/08, կետ 57, Pedersen and Baadsgaard v. Denmark գործով Եվրոպական դատարանի 2004 թվականի դեկտեմբերի 17-ի վճիռը, զանգատ թիվ 49017/99, կետ 71, Von Hannover v. Germany գործով Եվրոպական դատարանի 2012 թվականի փետրվարի 7-ի վճիռը, զանգատ թիվ 40660/08 և 60641/08, կետ 102



տեղեկատվություն: Մինչ այդ, մամուլում տպագրված նյութերով քրեական գործերի հարուցման դատավարական կարգը նախատեսվում էր ԽՍՀՄ գլխավոր դատախազի հրամաններով<sup>2</sup>:

Ներկայումս գործող ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 179-րդ հոդվածի համաձայն՝ «Լրատվության միջոցների հաղորդումներ են հանդիսանում կատարված կամ նախապատրաստվող հանցագործությունների մասին հաղորդումները մամուլում, ռադիոյով, հեռուստատեսությամբ, ինչպես նաև լրատվության միջոցներին հասցեագրված և չհրապարակված հաղորդակցություններում»:

Վերոնշյալ իրավադրույթի բովանդակությունից հետևում է, որ որպես քրեական գործի հարուցման առիթ կարող են հանդիսանալ՝ քրեական օրենքով արգելված արարքի մասին տվյալներ պարունակող տպագիր կամ առցանց եղանակով հրապարակված հոդվածները կամ տեսանյութերը, ռադիոյով կամ հեռուստատեսությամբ հրապարակված տեղեկությունները: Այդ կապակցությամբ հարկ է նկատել, որ հաղորդակցության՝ նշված աղբյուրներից որևէ մեկով «հրապարակված» լինելու պայմանը թեև օրենսդրի կողմից վերոնշյալ հոդվածում չի օգտագործվում՝ այն ԱՊՀ անդամ պետությունների կողմից 1996 թվականի փետրվարի 17-ին Սանկտ Պետերբուրգում կայացված որոշմամբ ընդունված մեկ միասնական քրեական դատավարության մոդելային օրենսգրքից (այսուհետ՝ նաև Մոդելային օրենսգիրք)<sup>3</sup> անհաջող թարգմանելու պատճառով, սակայն իմաստային առումով այն ընկալվում է:

Ինչ վերաբերում է լրատվության միջոցներին հասցեագրված և չհրապարակված հաղորդակցություններին, ապա դրանք թեև օրենսդրի կողմից նախատեսվել են վերոնշյալ հոդվածում, սակայն որպես այդպիսին չեն համապատասխանում քննարկվող առիթի էությանը, որը ենթադրում է քրեական գործի հարուցման առիթում պարունակվող տեղեկատվության հասանելիության ապահովում իրավապահ մարմիններին բացառապես հրապարակայնացման միջոցով: Հակառակ պարագայում, երբ այդպիսի տեղեկատվությունը չի հրապարակվում, բայց համապատասխան սուբյեկտների (այդ թվում՝ օրինակ իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ՋԼՄ-ի) ակտիվ գործողությունների (օրինակ՝ այդ մասին գրավոր դիմումի

<sup>2</sup> St' u A.P. Михайленко, Возбуждения уголовного дела в советском уголовном процессе, 1975, խմբ. А. Л. Ципкина, Саратов, էջ 61

К.Александровна, Опыт использования материалов СМИ в качестве повода возбуждения уголовного дела: прошлое, настоящее, перспективы на будущее, Вестник Нижегородской академии МВД России, 2014, №1 (25), էջ 211-215

<sup>3</sup> St' u Модельный уголовно-процессуальный кодекс для государств - участников Содружества Независимых Государств, Рекомендательный законодательный акт.



հասցեագրման) արդյունքում հասանելի է դառնում քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին, ապա քրեական գործ հարուցելու առիթը փոխվում է:

Վերոնշյալ դիրքորոշումը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՋԼՄ-ի հաղորդումներով քրեական գործ հարուցելու առիթի առանձնահատկությունը կայանում է նրանում, որ այս դեպքում քրեական գործ հարուցվում է համապատասխան իրավասություն ունեցող մարմինների ակտիվ գործողությունների (նույն հատկանիշը բնորոշ է նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթին), այն է՝ այդ տեղեկատվությունը սեփական նախաձեռնությամբ որպես քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին տվյալ ընկալելու արդյունքում: Մինչդեռ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հաղորդումների դեպքում, վերջիններս իրենց կրող տեղեկատվությունն արդեն իսկ ընկալում են որպես քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին տեղեկատվություն և ձեռնարկում ակտիվ գործողություններ, այն է՝ համապատասխան հաղորդում ներկայացնում, քրեական գործ հարուցելու օրինական առիթ ձևավորելու համար:



## I. ԼՐԱՏՎԱՍԻՉՈՑԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԱՈՒԹ

Քննարկվող առիթի վերաբերյալ օրենսդրի կողմից տրված կարգավորումներից հետևում է, որ ՋԼՄ-ի հաղորդակցություններում քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին պարունակվող տեղեկատվությունն ինքնին հանդիսանում է հաղորդում, որի հիման վրա պետք է հարուցել քրեական գործ: Սակայն, այդ կապակցությամբ իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ լինում են դեպքեր, երբ քննարկվող առիթը վերաճում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթի, այն է՝ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը՝ իրենց լիազորություններն իրականացնելիս:

Մասնավորապես, խոսքն այն մասին է, որ օրինակ՝ «Ազատություն ռադիոկայան» ՋԼՄ-ի հրապարակված տեսանյութում պարունակվող տեղեկատվությունն ինքնին ոչ թե դառնում է քրեական գործի հարուցման առիթ, այլ ընդամենը հիմք է հանդիսանում քրեական գործ հարուցելու համար, երբ համապատասխան մարմնի աշխատակցի զեկուցագրի հիման վրա որոշում է կայացվում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթով քրեական գործ հարուցելու մասին, որին էլ հետագայում կցվում է քրեական հետապնդումն իրականացնող մարմնի՝ «Ազատություն ռադիոկայան» ՋԼՄ-ի հրապարակված տեսանյութն իր աշխատասենյակում գննության ենթարկելու վերաբերյալ արձանագրությունը: Մինչեռ, պետք է արձանագրել, որ այդ առիթով քրեական գործ կարող է հարուցվել բացառապես այն դեպքում, երբ քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանքի կատարման մասին տեղեկատվությունը ստացվում է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս: Այսինքն, այն նշանակում է՝ կոնկրետ քրեական գործով օրինակ՝ քննիչի կողմից վկային հարցաքննելիս կամ դատախազի կողմից մեղադրական եզրակացությունը հաստատելիս քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին հատկանիշների հայտնաբերում: Այլ կերպ, օրենսդրի կողմից տրված՝ «իրենց լիազորություններն իրականացնելիս» եզրաբանությունն իրենից ենթադրում է այդ մարմինների կողմից ex officio իրենց դատավարական լիազորություններն իրականացնելու ընթացքում քրեական օրենքով արգելված



արարքի կատարման հատկանիշների հայտնաբերում և չի կարող դիտարկվել օրինակ՝ դատախազի կողմից առավոտյան աշխատանքի գալուց հետո համացանցում լուրերին ծանոթանալիս քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշներ հայտնաբերելու կապակցությամբ քրեական գործ հարուցելու օրինական առիթ:

Ուստի, ՋԼՄ-ի հրապարակումների վերաբերյալ քրեական գործ հարուցելու առիթի վերաճման դեպքերն իրավաչափ կարող են համարվել միայն այն դեպքում, երբ հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի, դատարանի, դատավորի կողմից հանցագործության մասին տվյալների, հանցագործության նյութական հետքերի և հետևանքների հայտնաբերումը փոխկապակցված չլինել իրենց լիազորություններն իրականացնելու պայմանով:

Հարկ է նկատել, որ «իրենց լիազորություններն իրականացնելու» պայմանի սահմաններն առավել հստակ նախանշվում էին Մոդելային օրենսգրքում, որտեղից էլ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթն առանց այն մեկնաբանող համապատասխան հոդվածի ոչ ամբողջությամբ ինկորպորացվել է գործող օրենսգիրք: Մասնավորապես, ի տարբերություն մյուս բոլոր առիթների, որոնց մեկնաբանությունը տրված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 177-179-րդ հոդվածներում, իրենց լիազորություններն իրականացնելիս քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին տեղեկություններ հայտնաբերելու կապակցությամբ քրեական գործ հարուցելու առիթի մեկնաբանությունը գործող քրեական դատավարության օրենսգրքում չի պարունակվում: Մինչդեռ, Մոդելային օրենսգրքում այն մեկնաբանվում էր 224-րդ հոդվածի ներքո այն բովանդակությամբ, որ քրեական գործ հարուցվում է պաշտոնատար անձանց և քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից հանցագործության կատարման մասին տեղեկություններ ստանալու հետևյալ դեպքերում.

- որպես պաշտոնատար անձ հանդես եկող հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը, դատարանը կամ դատավորը ականատես են լինում հանցագործության կատարմանը, հայտնաբերում են հանցագործության հետքեր կամ հետևանքներ,

- հետաքննության մարմնի աշխատակիցը ստանում է հանցագործության կատարման մասին տեղեկություններ իր վարչական գործառույթներ իրականացնելիս կամ մեկ այլ գործով հետաքննություն իրականացնելիս,

- քննիչը ստանում է հանցագործության կատարման մասին տեղեկություններ մեկ այլ գործի նախաքննության ընթացքում,



- դատախազը ստանում է հանցագործության կատարման մասին տեղեկություններ օրենքների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելիս կամ մեկ այլ գործով նախաքննություն կատարելիս,

- դատարանը ստանում է հանցագործության կատարման մասին տեղեկություններ քաղաքացիական, վարչական գործ կամ քրեական գործ քննելիս:

Ինչպես կարելի է նկատել նշված հիմքերից՝ ըստ կարգավորման բացառապես դատախազն է օժտված եղել վերացական հսկողություն իրականացնելով քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին տեղեկատվություն ստանալիս կամ այդպիսին հայտնաբերելիս հարուցել քրեական գործ՝ կաշկանդված չլինելով կոնկրետ գործի շրջանակներում այդպիսի տվյալները ստացած լինելու պահանջով: Այդպիսի կարգավորման նախատեսումը պայմանավորված է եղել խորհրդային տարիներին դատախազների ունեցած՝ օրենքների ճիշտ և միատեսակ կիրառություն ապահովելու առաքելությամբ, որպիսի մոտեցումն ընդունելի է համարվել Մոդելային օրենսգրքի ընդունման պահի դրությամբ:

Սակայն, ներկայիս կարգավորումների պայմաններում, երբ դատախազն օժտված չէ վերացական հսկողություն իրականացնելու իրավասությամբ և սահմանադրի կողմից ամրագրված իր գործառույթները կարող է ի կատար ածել միայն կոնկրետ քրեական գործի շրջանակներում<sup>4</sup>, ապա լրատվության միջոցներում քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշներ պարունակող հրապարակումների կապակցությամբ քրեական գործերը ենթակա են հարուցման ոչ թե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ կետով նախատեսված առիթով, այլ հենց «լրատվության միջոցների հաղորդումները» ձևակերպումը կրող ինքնուրույն առիթով: Վերջիվերջո, այդպիսի մոտեցման իրավաչափության մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ օրենսդրի կողմից

<sup>4</sup> Մինևույն ժամանակ, պետք է նշել, որ դատախազի կողմից վերացական հսկողություն իրականացնելու իրավասության բացակայության պայմաններում 1998 թվականին ընդունվելուց ի վեր որևէ փոփոխության չենթարկված ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 176-րդ հոդվածի՝ քրեական գործ հարուցելու առիթներից որևէ մեկով ըստ էության քրեական գործ չի կարող հարուցվել այն տեղեկությունների կապակցությամբ, որոնց վերաբերյալ բացակայում է ֆիզիկական կամ իրավաբանական անձի հաղորդում, դրանք չեն պարունակվում համացանցային կամ տպագրված մամուլում, չեն հայտնաբերվում իրավապահ մարմինների կողմից իրենց լիազորություններն իրականացնելիս, սակայն զետեղված են օրինակ՝ համացանցում «ֆեյսբուքյան էջ» կամ «անձնական բլոգ» կոչվող տիրույթներում և պարունակում են քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին հատկանիշներ (օրինակ՝ անձն իր ֆեյսբուքյան էջում հրապարակում է ապօրինի ձեռքբերված այլ անձի անձնական տեղեկությունները): Հետևաբար, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում օրենսդրական այդ կարգավորումը վերանայման կարիք ունի:



լրատվամիջոցների հաղորդումների կապակցությամբ քրեական գործի հարուցման այդպիսի ինքնուրույն առիթ է նախատեսվել:

Ինչ վերաբերում է լրատվության միջոցների հաղորդումներով քրեական գործ հարուցելու կառուցակարգին, մասնավորապես՝ ով և ինչպես պետք է արձագանքի այդ հաղորդումներին, ապա կարծում ենք, որ քրեական գործ հարուցելու իրավասությամբ օժտված յուրաքանչյուր սուբյեկտ նկատելով քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշներ պարունակող լրատվամիջոցի հրապարակում՝ իր անմիջական ղեկավարին զեկուցելուց հետո պետք է համապատասխան ընթացակարգով այն արձանագրի (գրանցի կամ միջոցներ ձեռնարկի հաղորդումների գրանցման միասնական մատյանում այն ամրագրելու ուղղությամբ) և ձեռնամուխ լինի քրեական գործի հարուցման հարցի լուծմանը:





## II. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՀԱՐՈՒՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ԱՌԻԹ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ԶՄՓԱՆԻՇՆԵՐԸ.

Թերևս իրավական կանոնակարգման առումով ամենաբարդ խնդիրներից մեկն է հանդիսանում այն չափանիշների մշակումը, որոնց համապատասխանող հաղորդումը կարող է «իմպերատիվ» առիթ հանդիսանալ քրեական գործի հարուցման համար: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ ինչպես լրատվության միջոցի հրապարակումը, այնպես էլ ցանկացած անձի հայտարարությունը որպես քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին հաղորդում ընկալելու գործընթացը կրում է խիստ սուբյեկտիվ բնույթ:

Սակայն, պետք է արձանագրել, որ այդ սուբյեկտիվության և դրանից բխող՝ քրեական գործ հարուցելու ընդարձակ հայեցողության հետ մեկտեղ, ողջամտորեն քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշներ պարունակվող հրապարակումներին՝ քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից արձագանքելու պահանջը պետք է որոշակիորեն լինի կանխատեսելի, հակառակ պարագայում այդ հայեցողական մոտեցումը կարող է պարունակել կամայականության տարրեր:

Ընդ որում, այդպիսի չափանիշների սահմանումը պետք է կատարվի համապատասխան ներքին գերատեսչական ակտերով, այլ ոչ թե օրենսգրքի մակարդակով, որտեղ ամրագրվում է մեկ ընդհանուր չափանիշ, այն է՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշների առկայությունը: Այդպես է նաև արտասահմանյան երկրներում (ԱՊՀ երկրներ, Մերձբալթյան երկրներ, անգլոսաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրներ), որտեղ ընդունված քրեական դատավարության օրենսգրքերում (անկախ քրեական գործի հարուցման փուլի առկայությունից) որպես միասնական չափանիշ է դիտարկվում քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշների առկայությունը, իսկ ընդհանուր կարգով քրեական վարույթի նախաձեռնման լրացուցիչ չափանիշները կամ չեն ամրագրվում, կամ նախատեսվում են համապատասխան ներքին իրավական ակտերով<sup>5</sup>:

<sup>5</sup> Օրինակ՝ ՌԴ Գլխավոր դատախազի՝ 2007 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ 195 հրամանի 22-րդ կետում նշված է, որ ՌԴ գլխավոր դատախազության ստորաբաժանումների կողմից ՌԴ գլխավոր դատախազություն են ենթակա ուղարկման առավել ակտուալ հարցերի, այդ թվում՝ ՋԼՄ-ում քննադատության արժանացած և հասարակական ռեզոնանս առաջացրած՝ օրենքի մասսայական, կոպիտ խախտումների վերաբերյալ դատախազական արձագանքը պարունակող փաստաթղթերի պատճենները:



Գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում քննարկման առարկա դարձնելով քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին տեղեկություններ պարունակող լրատվության միջոցների հաղորդակցություններին արձագանքելու չափանիշների որոշակիացման հարցը՝ նախնառաջ պետք է նշել, որ լրատվության միջոցների հրապարակումը որպես քրեական գործ հարուցելու առիթ դիտարկելու համար անհրաժեշտ է պարզել, թե ինքնին տեղեկատվությունը հրապարակվել է արդյոք «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանող լրատվության միջոցի կողմից, թե ոչ, հակառակ պարագայում քննարկվող առիթն օրինական համարվել չի կարող:

Բացի այդ, անհրաժեշտ է նաև նշել, որ լրատվության միջոցների հրապարակումը որպես քրեական գործ հարուցելու առիթ դիտարկելու համար անհրաժեշտ է պարզել, թե հրապարակումն արդյոք համապատասխանում է «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» ՀՀ օրենքի պահանջներին և եթե ոչ, ապա պետք է գնահատել, թե արդյոք նույն տեղեկատվությունը կարելի է ստանալ այդ պահանջներին համապատասխանող սկզբնաղբյուրից: Մասնավորապես, այն դեպքերում, երբ օրինակ լրատվության միջոցի հրապարակումը պարունակում է հղում «մայր» աղբյուրին, ապա քրեական գործի հարուցման առիթ պետք է դիտարկել ոչ թե այդ հղման բովանդակությունը վերաբրտադրած լրատվության միջոցների հաղորդակցությունը, այլ անմիջականորեն «մայր» աղբյուրում պարունակվող տեղեկատվությունը (օրինակ՝ tert.am լրատվամիջոցի կողմից իր կայքում հրապարակված նյութը «Հրապարակ» օրաթերթի կայքէջից վերցված լինելու դեպքում պետք է քրեական գործ հարուցվի ոչ թե tert.am-ի, այլ «Հրապարակ» օրաթերթի հրապարակման կապակցությամբ):

Վերոնշյալ չափանիշի կիրառման անհնաժեշտությունը պայմանավորված է հետևյալ երկու հանգամանքներով.

ա) օրինակ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների կատարման վերաբերյալ քրեական գործ հարուցելու դեպքում կարող է առաջանալ տեղեկատվության աղբյուրի հրապարակման անհրաժեշտություն<sup>6</sup>, որպիսի պահանջը կարող է կատարվել ոչ այլ, քան այդ տեղեկատվությունն անմիջականորեն կրող լրատվության միջոցի կողմից,

բ) իրավունքի զարգացման միտումը գնում է դեպի իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող սուբյեկտներին քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորության նախատեսում, որը նաև վերաբերում է այդպիսի կարգավիճակ ունեցող զանգվածային

<sup>6</sup> Տես ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ՍԴՌ-1234 որոշումը:



լրատվության միջոցներին: Ուստի, հաշվի առնելով նաև սուտ մատնության հանցակազմի առկայությունը, ինչպես նաև այդ հանցակազմի դիսպոզիցիայի բովանդակությունն ըստ ներկայումս շրջանառության մեջ գտնվող նոր քրեական օրենսգրքի նախագծի <sup>7</sup>, ապա ողջամտորեն կարող է ծագել իրավաբանական անձի կարգավիճակով գրանցված ՁԼՄ-ին սուտ մատնության համար քրեական պատասխանատվության ենթարկելու հնարավորություն, որը կարող է իրատեսական լինել միայն այդ սուբյեկտի կողմից ներկայացված հաղորդման բովանդակությունը քրեադատավարական օրենքով նախատեսված կարգով հերքելուց հետո:

Այսինքն, պետք է արձանագրել, որ քրեական օրենքով արգելված հատկանիշներ կրող տեղեկատվությունը, որպես այդպիսին, պետք է դառնա քրեական գործի հարուցման օրինական առիթ «մայր» աղբյուրից ստացված լինելու պարագայում:

Անդրադառնալով լրատվության միջոցների հրապարակումներում պարունակվող բուն տեղեկատվությունը որպես քրեական գործի հարուցման օրինական առիթ գնահատելու չափանիշներին՝ կարծում ենք, որ տվյալ դեպքում պետք է ելնել *prime facie* (առերևույթ) քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշներ պարունակելու հնարավորությունը կանխատեսելու հանգամանքից: Այսինքն, լրատվության միջոցների հրապարակումների առթիվ քրեական գործ հարուցելու կայուն չափանիշ պետք է դիտարկվի այն հանգամանքը, թե արդյոք դրանով փաստվում է այնպիսի գործողություն կամ անգործություն, որը ողջամտորեն համընկնում է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցավոր արարքի հատկանիշներին:

Իսկ այն դեպքերում, երբ լրատվամիջոցի հրապարակման *prime facie* հանցանքի կատարման չափանիշն ապահովված չէ, սակայն դրանով փաստվում է այնպիսի գործողություն կամ անգործություն, որին ողջամտորեն կարող է տրվել (ոչ թե հաստատապես տրվելու է<sup>8</sup>) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված որևէ հանցավոր արարքին համապատասխանելու նախնական իրավական գնահատական, ապա լրատվամիջոցի հրապարակումը պետք է արձանագրվի որպես հաղորդում և այդ կապակցությամբ նախապատրաստվեն նյութեր: Ցավոք, ՀՀ իրավակիրառ պրակտիկայում տարածված չէ

<sup>7</sup> Տես ՀՀ քրեական օրենսգրքի նոր նախագծի 443-րդ հոդվածի 1-ին մասը, որի համաձայն՝ «Սուտ մատնությունը՝ իրավասու մարմիններին հանցագործության դեպքի կամ անձի կողմից հանցանք կատարելու մասին սուտ տեղեկություն տալը կամ զանգվածային լրատվության միջոցներում նույնաբովանդակ տեղեկատվություն հրապարակել[ն է]»:

<sup>8</sup> Տես Հրայր Մանուկյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2016 թվականի մարտի 30-ի թիվ ԵԿԴ/0154/11/14 որոշման 14-րդ կետը:



լրատվության միջոցների հաղորդումների կապակցությամբ նյութեր նախապատրաստելը և քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշում կայացնելը: Մասնավորապես, լրատվության միջոցների հաղորդումների կապակցությամբ, որպես կանոն, նյութեր նախապատրաստվում են այն դեպքերում, երբ հաստատապես ակնհայտ է հրապարակման մեջ պարունակվող տեղեկատվության՝ քրեական օրենքով արգելված լինելը, այսինքն, երբ ողջամտորեն կանխորոշվում է քրեական գործի հարուցման մեծ հավանականությունը: Մինչդեռ, պետք է արձանագրել, որ այդպիսի դեպքերում լրատվամիջոցների՝ public watchdog գործունեության արդյունքներին իրավապահ մարմինների՝ հնարավորինս կարճ ժամկետներում, ցանկացած բովանդակություն ունեցող արձագանքը կարող է վկայել իրավունքի գերակայության նկատմամբ հարգանքի, պետության «իրավական» բաղադրիչի արժեքանական բարձր նշանակության մասին:

Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ լրատվամիջոցի հրապարակման բովանդակությունը դարձել է հասարակական ակտիվ քննարկման առարկա և որպես այդպիսին (տեսականորեն) կարող է պարունակել քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշներ, ապա կարծում ենք, որ այդ հրապարակումներին ևս պետք է արձագանքեն քրեական գործ հարուցելու իրավասությամբ օժտված մարմինները: Ընդ որում, Էմմա Կարապետյանի, Ռուզաննա Նիսիյանի վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում<sup>9</sup> արտահայտված իրավական դիրքորոշումների կիրառմամբ նույնիսկ նյութեր չնախապատրաստելու և քրեադատավարական որոշում չկայացնելու պարագայում, գտնում ենք, որ դրանց կապակցությամբ պարտադիր կերպով պետք է առնվազն հրապարակվի, որ դրանք քննարկման առարկա են դարձվել, սակայն հանցագործության կատարման հիմքերի առհասարակ բացակայության պատճառով չեն կարող կիրառվել քրեադատավարական որոշում կայացնելու համար:

Այսինքն, վերոնշյալ հիմնավորումների հիման վրա գտնում ենք, որ ընդհանուր մոտեցումը պետք է լինի այն, որ ողջամտորեն քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշներ պարունակող կամ այդպիսի հատկանիշներ պարունակելու իրական հնարավորություն ունեցող կամ այդպիսի հատկանիշներ պարունակելու տեսական հնարավորություն ունեցող և հասարակական ակտիվ քննարկման առարկա դարձված

<sup>9</sup> Տես Էմմա Կարապետյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2007 թվականի հուլիսի 13-ի թիվ ՎԲ-133/07 որոշումը, Ռուզաննա Նիսիյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի՝ 2014 թվականի մայիսի 31-ի թիվ ԵԿԳ/0118/11/13 որոշումը:



լրատվամիջոցների հրապարակումները չպետք է մնան անարձագանք քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից:

Նշվածի համատեքստում պետք է նաև փաստել, որ ըստ էության իմպերատիվ արձագանքման կարիք ունեն նաև լրատվության միջոցներով իրավապահ մարմիններին հասցեագրված՝ քրեական օրենքով արգելված արարքների կատարման հատկանիշների առկայության մասին վկայող՝ այսպես կոչված «բաց նամակները»: Մասնավորապես, այդ նամակների հեղինակները թեև որպես կանոն լինում են ֆիզիկական անձինք, սակայն, հաշվի առնելով, որ որպես նամակներում պարունակվող տեղեկատվության կրող հանդես են գալիս լրատվության միջոցները, ապա նրանց կողմից ներկայացված՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման մասին հրապարակումների կապակցությամբ քրեական գործի հարուցման հարցի լուծումը նույնպես ենթակա է լինում քննարկման «լրատվության միջոցների հաղորդումները» առիթի շրջանակներում: Հետևաբար, «բաց նամակ» բնորոշմամբ հրապարակումներում պարունակվող տեղեկատվության կապակցությամբ, որը նաև որպես կանոն դառնում է հասարակության ակտիվ քննարկման առարկա և հասարակության անկողմնակալ անդամների (հրապարակված հոդվածի հետ առնչություն չունեցող անձանց) մոտ կարող է առաջացնել ողջամիտ համոզմունք քրեական օրենքով արգելված արարքի կատարման հատկանիշների առկայության մասին, պետք է քննարկման առարկա դառնա քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմնի կողմից:

Այսպիսով, ամփոփելով վերոնշյալը՝ գտնում ենք, որ քրեական օրենքով արգելված ենթադրյալ հանցանքի կատարման հատկանիշներ պարունակող լրատվամիջոցների հրապարակումները որպես քրեական գործ հարուցելու առիթ դիտարկելու չափանիշները պետք է որոշակիորեն կանխատեսելի լինեն և անկախ ելքից (այն է՝ քրեական գործ հարուցելուց, քրեական գործի հարուցումը մերժելուց, նույնիսկ դատավարական որոշում չկայացնելուց) չմնան անարձագանք քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների կողմից:



### III. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՂՈՂՈՒՄՆԵՐԻՆ ԱՐՉԱԳԱՆՔԵԼՈՒ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ.

Թերևս գաղտնիք չէ, որ քրեական գործի հարուցման քննարկվող առիթն իր բնույթից ելնելով պահանջում է մշտապես հետևել լրատվության բոլոր միջոցների հրապարակումներին և ըստ սուբյեկտիվ ընկալման գնահատման ենթարկել դրանցում պարունակվող տեղեկատվությունը: Սակայն, հաշվի առնելով այդ աշխատանքի մեծածավալությունը, պահանջվող նյութական և մարդկային ռեսուրսների անհրաժեշտությունը, կարծում ենք, որ իրավապահ մարմինների աշխատանքին այդ հարցով աջակցող լավագույն գործիք կարող է դառնալ էլեկտրոնային հարթակի ստեղծումը, որն ինչպես կբարձրացնի լրատվության միջոցների հաղորդումներին արձագանքելու հնարավորությունների արդյունավետությունը, այնպես էլ նվազագույնի կհասցնի ցանկացած քննադատություն այն մասին, որ իրավապահ մարմինները չեն արձագանքել կոնկրետ լրատվամիջոցի հրապարակմանը:

«Էլեկտրոնային հարթակ» ասելով նկատի ունենք իրավապահ մարմինների (օրինակ՝ դատախազության) պաշտոնական կայքէջում առաջին բաժնի նախատեսումը՝ նվիրված լրատվության միջոցների հաղորդումներին, որը պետք է ծառայի երկու նպատակով.

ա) այն պետք է հնարավորություն ընձեռի հետևել ՁԼՄ հաղորդումների կապակցությամբ իրավապահ մարմինների յուրաքանչյուր արձագանքման տվյալներին, այդ թվում՝ ապահովելով հրապարակային ՁԼՄ հաղորդման կապակցությամբ կայացված վերջնական որոշման հրապարակայնությունը: Այդ բաժնում պարունակվող տեղեկատվությունը պետք է պարբերաբար թարմացվի՝ ցույց տալով այդ գործերի լուծման արդյունքը, վիճակագրական տվյալները: Այսինքն, նպատակը պետք է լինի այն, որ public watchdog գործունեությունն իրականացնող լրատվամիջոցների ցանկացած հրապարակմանը դատախազության արձագանքման պահից հասարակության յուրաքանչյուր անդամ պետք է հնարավորություն ունենա համացանցի միջոցով առցանց ռեժիմով հետևել այդ գործի ընթացքին և անմիջապես դատախազությունից տեղեկանալ հաղորդման արդյունքում կայացված որոշման բնույթի, բովանդակության և հիմքում ընկած պատճառաբանությունների մասին:

բ) այն ի աջակցություն իրավապահ մարմինների աշխատանքին պետք է յուրաքանչյուր անձի հնարավորություն ընձեռի հաղորդագրության միջոցով ուղարկել ՁԼՄ հրապարակման հղումը (առանց հաղորդումն ուղարկողից որևէ այլ ֆորմալ տվյալի պահանջման): Նշված



գործիքի կիրառմամբ էականորեն կարող է բարձրանալ ՁԼՄ հաղորդումներին արձագանքելու հնարավորությունների արդյունավետությունը, լրատվամիջոցների այն հրապարակումները, որոնք դուրս կմնան իրավապահ մարմինների տեսադաշտից նույնպես կլինեն հասանելի: Այսինքն, յուրաքանչյուր անձ, ով կկարծի, որ ՁԼՄ հաղորդումը պարունակում է հանցանքի կատարման տարրեր, որին չի արձագանքում քրեական գործ հարուցելու իրավասություն ունեցող մարմինները, ապա հաղորդման հղումը կհասցեագրի իրավապահ մարմին, որի արդյունքում այն կդառնա պարտադիր քննարկման առարկա: Ընդ որում, պետք է նշել, որ հղումը պետք է քննարկվի այն ուղարկելու պահից 10-օրյա ժամկետում (այն է՝ հաղորդումների քննարկման քրեադատավարական ժամկետում) և հրապարակային տեղեկացվի ՁԼՄ հրապարակման կապակցությամբ կայացված որոշման մասին կամ որոշում չկայացնելու մասին՝ հանցագործության կատարման բավարար հիմքերի բացակայության պատճառով:

Վերոնշյալ գործիքի կիրառումը հնարավորություն կընձեռի նաև առավել արդյունավետ ի կատար ածել՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի՝ «քրեական արդարադատության համակարգում դատախազների դերին նվիրված» Rec(2000)19 հանձնարարականի 11-րդ կետը, որտեղ ընդգծվում է հասարակության անունից հանդես եկող դատախազների կողմից իրենց կատարած աշխատանքի արդյունքները հրապարակայնացնելու կարևորությունը՝ հաշվի առնելով նաև քրեական հետապնդում իրականացնելու լիազորության հայեցողական բնույթը<sup>10</sup>: Բացի այդ, առավել քան երաշխավորված կլինի Եվրոպական դատախազների խորհրդակցական խորհրդի՝ 2013 թվականի հոկտեմբերի 9-ի՝ դատախազների և մամուլի փոխհարաբերություններին նվիրված՝ թիվ CCPE(2013)4 եզրակացության, այդ թվում՝ նաև վերջինիս 30-46-րդ կետերում նշված՝ քրեական հետապնդում իրականացնելիս իրավունքի գերակայության բաղադրիչը կազմող՝ թափանցիկության սկզբունքի, արդյունավետ ի կատար ածումը, նպաստելով արդարադատության պատշաճ իրականացման նկատմամբ հասարակության վստահության ամրապնդմանը<sup>11</sup>:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումներին սույն վերլուծության մեջ ներկայացված հանգամանքների հաշվառմամբ արձագանքելու պարագայում էականորեն կարող է բարձրանալ այդ

<sup>10</sup> Տե՛ս <https://rm.coe.int/16804be55a>

<sup>11</sup> Տե՛ս [https://www.euromed-justice.eu/en/system/files/CCPE\\_2013\\_4\\_Opinion%20No.%208\\_en.pdf](https://www.euromed-justice.eu/en/system/files/CCPE_2013_4_Opinion%20No.%208_en.pdf)



հրապարակումների հիման վրա հանցավորության դեմ պայքարի արդյունավետության մակարդակը: